ՍՏ. ՇԱՀՈՒՄՅԱՆԸ ԱՐԵՎՄՏԱԵՎՐՈՊԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԻ ԴՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Վ. Վ. ՄԻԿԻՉՅԱՆ

Ստ. Շահումյանը բազմիցս անդրադարձել է արևմտաեվրոպական երկրների (հատկապես Գերմանիայի) բանվոր դասակարգի դրության, ինչպես նաև բանվորական շարժումների հարցերին։ Նա գրում է, որ կապիտալիստական հարաբերությունների զարգացման հետևանքով «քայքայված գյուղական ազգաբնակչության գգալի մասը ապրուստի միջոցներ հայթայթելու համար թողնում է գյուղը, մեկնում քաղաք, ստվարացնելով քաղաքային պրոլետարիատի շարքերը։ Բանվոր դասակարգի գոյության պայմանները գնալով վատթարանում են։ Կապիտալի կատաղի թռիչքները փոխանակվում են արդյունաբերական ճգնաժամերով (կրիզիս) փողոց շպրտելով հազարավոր բանվորներ»[1]։

Քաղաքային բնակչության մեջ տեղի է ունենում բևեռացում։ Իր գործունեությունը կենտրոնացնելով քաղաքներում, կապիտալը «մի կողմից ստեղծում է խոշոր կապիտալիստներ, որոնք արտադրության միջոցների սեփականատերեր են, մյուս կողմից էլ ազգաբնակության միջին խավերը դառնում են չունևորներ, որ բացի իրանց ֆիզիկական ուժից ոչինչ չունեն։ Կապիտալիստ և բանվոր, բուրժուա և պրոլետարի հասկացողությունները ստանում են ռեալ գոյություն»[2]։

Զարգացող կապիտալիստական արդյունաբերությանն անհրաժեշտ էին աշխատող ձեռքեր։ Դրանք հողից կտրված մարդիկ էին, որոնք գոյություն պաշտպանելու համար ստիպված վաճառում էին իրենց ֆիզիկական ուժը։

Պրոլետարիատը բոլոր կապիտալիստական երկրներում կապիտալիզմի բուռն զարգացման ժամանակաշրջանում կազմում է ազգաբնակչության մեծամասնությունը։ Այսպես, օրինակ, Ստ. Շահումյանն ուսումնասիրելով Գերմանիայի ազգաբնակչության դասակարգային կառուցվածքը (1895 թ. տվյալներով), գրում է. «Գերմանիայի ազգաբնակության մեծագույն մասը, 55½ տոկոսը, բոլորովին պրոլետարականացած է։ 12½ տոկոսը կազմում են չքավոր սեփականատերերը, այսինքն այնպիսիները, որոնց սեփականություններն այնքան խղճուկ են, որ նրանք հարկադրված են սովից չմեռնելու համար դիմել կողմնակի աշխատանքների։ Դրանք էլ ուրեմն կիսով չափ օգտվում են աշխատավարձից, կիսով չափ պրոլետարներ են»[3]։ Այսպիսով, 1895 թ. տվյալներով՝ Գերմանիայի ազգաբնակչության 66½%-ը կամ ավելի քան ⅔-ը պրոլետարներ և կիսապրոլետարներ էին։ Վիճակը նույնն էր նաև Ֆրանսիայում, որտեղ «սեփականատերերը,— գրում է Ստ. Շահումյանը,— կազմում են ազգաբնակության 44,6%, մնացած 55,4%—բանվորներ են, սեփականազուրկ

1 *Ստ. Շահումյան, Երկեր, հ. 1, Երևան, 1955, էջ 42—43։*

2 *Նույն տեղում, էջ 42։*

3 *Նույն տեղում, էջ 66—67։*

պրոլետարներ։ Այդ 44,6% սեփականատերերի կեսից ավելին, մոտ 10 միլիոն հոգի, գյուղացիներ են։ Դրանցից 5 միլիոնը այնքան աղքատ են, որ իրանց կոյությունը պահպանելու համար հարկադրված են ծառայելու հարուստ հողատերերի մոտ, և ուրեմն նույնպես աշխատավարձ են ստանում»[4]։ Պատկերը նույնն էր նաև Ավստրիայում, Շվեյցարիայում և Բելգիայում։ Խոսելով Անգլիայի մասին, Ստ. Շահումյանը նկատում է, որ այն տնտեսապես ավելի զարգացած երկիր է և այդ պատճառով էլ այնտեղ վաղուց չքացել են գյուղական մանր սեփականատեր արդյունաբերողները։ Անգլիայում «Հողագործությունը, ինչպես և գյուղատնտեսությունը առհասարակ, դարձել է ամբողջովին խոշոր կապիտալիստական արդյունաբերություն և ոչնչով չի տարբերվում ինդուստրիական արդյունաբերությունից։ Պարզ է, որ այստեղ պրոլետարների թիվը պետք է անհամեմատ ավելի լինի, քան Եվրոպական մայր-ցամաքի երկրներում»[5]։

Հանրագումարի բերելով վերոհիշյալ տվյալները, Ստ. Շահումյանը եզրակացնում է. «Ընդհանուր առմամբ... եվրոպական համարյա բոլոր երկրներում, պրոլետարիատը կազմում է ազգաբնակության առնվազն $^2/_3$ մասը»[6]։

Եվրոպական երկրներում ազգաբնակչության պրոլետարականացումը գնալով մեծ չափեր էր ընդունում. «Մեքենաները, շոգին, էլեկտրականությունը, 19-րդ դարի այդ վիթխարի արդյունագործական ուժերը, մի կողմից նպաստելով խոշոր արդյունաբերության հաջող մրցմանը՝ արագացնում են մանր արդյունաբերության անկումը և ստվարացնում այդպիսով «թռչունի նման ազատ» մարդկանց թիվը, մյուս կողմից՝ ավելի ու ավելի մեծ չափերով իրանք փոխարինում են արդյունաբերության մեջ մարդկային բանվորական ուժը։ Այդպիսով, աշխատող ձեռքերի պահանջը ետ է մնում նրա առաջարկից, և վաճառանոցը լցվում է բազմաթիվ անգործ մարդկանցով, որոնք կազմում են Մարքսի ասած պահեստի գունդը»[7]։ Սովամահ չլինելու համար այդ մարդիկ ստիպված էին ամենաանբարյաց պայմաններով անգամ համաձայնության գալ կապիտալիստների հետ։ Ստ. Շահումյանն ուսումնասիրելով դասակարգերի և դասակարգային պայքարի զարգացման պատմական օրինաչափությունները, նշել է, որ «Ներկա հասարակության մեջ, որը հիմնված է մասնավոր սեփականության և ազատ մրցման վրա, երբեք չի կարելի վերացնել շահագործությունը։ Ընդհակառակը, մենք տեսնում ենք, որ բոլոր կապիտալիստական երկրներում, քանի գնում՝ հավելյալ արժեքի նորման, ուրիշ խոսքով՝ բանվորների շահագործության աստիճանը ավելի ու ավելի բարձրանում է»[8]։

Հենվելով վիճակագրական ու փաստական հարուստ տվյալների վրա, Ստ. Շահումյանը ցույց է տվել, որ կապիտալիստական երկրներում բանվորների շահագործման աստիճանը շարունակ բարձրանում է։ «Անգլիական բանվորների ստացած աշխատավարձերի ընդհանուր գումարը՝ 1860 թվականից մինչև 1874 թիվը կազմելիս է եղել միջին թվով ամբողջ ազգային եկամտի 45%-ը, մինչդեռ հետո, 1877-ից մինչև 1891-ը, նա կազմել է միայն $42^2/_3$

4 Նույն տեղում, էջ 67։
5 Նույն տեղում, էջ 68։
6 Նույն տեղում։
7 Նույն տեղում, էջ 69—70։
8 Նույն տեղում, էջ 71։

տոկոսը... Բանվորների շահագործության աստիճանը, հիշված ժամանակամիջոցում, 96 տոկոսից բարձրացել է մինչև 112 տոկոս»[9]։

Կապիտալիզմի օրոք շահագործվում է նաև բանվորի ընտանիքը։ Դա հանգեցնում է տղամարդ բանվորների աշխատավարձի իջեցմանը։ «Եթե մինչև այդ, բանվորին վճարելիս՝ կապիտալիստն աչքի առաջ էր ունենում մասամբ բանվորի ընտանիքը, որովհետև նրան անհրաժեշտ է, որ այդ ընտանիքը գոյություն ունենա և բանվորների նոր սերունդներ մատակարարե արդյունաբերության համար,— գրում է Ստ. Շահումյանը,— այժմ, երբ այդ ընտանիքի անդամները իրանք արդեն սկսում են աշխատել, նա վճարում է բանվորին միայն այնքան, որքան անհրաժեշտ է նրա անհատական գոյության համար»[10]։ 1863 թ. Անգլիայում կատարված պաշտոնական քննությունը ցույց տվեց, որ բանտարկված ոճրագործներն ավելի լավ են կերակրվում, քան բանվորները։ Բանվոր դասակարգի դրությունը նույնն էր նաև Բելգիայում։ Նյութական և կենցաղային անտանելի պայմանների մեջ էր նաև գերմանական բանվոր դասակարգը, որի դրության մասին խոսելիս Ստ. Շահումյանը մասնավորապես վկայակոչում է բուրժուական գրող է. Ֆրանկեի հետևյալ խոսքերը. «...Գերմանական բանվորների տարեկան աշխատավարձը կազմում է 600-ից 700 մարկ, Սաքսոնիայի և Սիլեզիայի մի քանի տեղերում արհեստավոր ոստայնանկների բազմաթիվ ընտանիքներ ամենաողորմելի գոյություն են քարշ տալիս տարեկան 300-ից 400 մարկով։ Դերձակների մոտ աշխատող կանանց դրությունը, որոնք շաբաթական 6—7 մարկ են ստանում, դեռ վատթարադույնը չէ։ Այդ տեսակ ընտանիքների բյուջեների մեջ շորի, կոշիկների, կահկարասիքի վրա ընկնում է հազիվ 40, 30 և մինչև իսկ 20 մարկ տարեկան։

Միլիոնավոր մարդիկ միայն մեծ տոներին հնարավորություն ունեին տեսնելու իրանց սեղանի վրա իսկական մսի կտոր։ Հարյուր հազարները ապրում են նեխված, խճողված բնակարաններում։ Եվ այդ կարգի բնակարանները լրցված են հաշվում միայն այն ժամանակ, երբ ամեն մի սենյակում ապրում են 6 հոգի, իսկ երկու սենյակից բաղկացած բնակարաններում՝ ավելի քան 10 հոգի»[11]։

Ընդհանրացնելով այս փաստերը Ստ. Շահումյանը եկել է այն եզրակացության, որ «այդ թշվառ տնտեսական վիճակի բնական և անխուսափելի հետևանքն է ազգաբնակության մեծամասնության ֆիզիկական և բարոյական այլասերումը։ Բարակացավը և այլ նման «պրոլետարական» կոչվող հիվանդությունները, որ հետևանք են տասնյակ տարիների կիսաքաղց գոյության. վաղաժամ մահացությունը բանվորների մեջ քանի գնում ավելի ու ավելի հրեշավոր չափեր է ընդունում»[12]։ Ստ. Շահումյանը հիմնավորում է նաև, որ տընտեսական ծանր պայմանների հետևանք է ալկոհոլիզմի, ոճրագործությունների և պրոստիտուցիայի հարաճուն զարգացումը[13]։

Այս առթիվ նա մերկացնում է մարդաբանական-փորձաքննության դպրոցի ներկայացուցիչներ Լոմբրոզոյին, Տարնովսկուն, Ֆերրերոյին և այլոց, որոնք ձգտում էին ապացուցել, թե ալկոհոլիզմը, ոճրագործությունը և անբա-

9 Նույն տեղում։
10 Նույն տեղում, էջ 71—72։
11 Նույն տեղում, էջ 75—76։
12 Նույն տեղում, էջ 76։
13 Նույն տեղում, էջ 79։

րոյականությունը զուտ կենսաբանական-մարդաբանական կատեգորիաներ են, որ մարդիկ ծնվում են որպես այդպիսիք։ «Ներկայումս հասարակագիտական թեորիաները մի կողմից, և ստատիստիկական բազմաթիվ ուսումնասիրությունները մյուս կողմից,— գրում է Ստ. Շահումյանը,— միանգամայն պարզել են, որ այդ երևույթները, իբրև լայն, մասսայական երևույթներ, ոչ թե բիոլոգիական, այլ ընդհակառակը, սոցիոլոգիական կատեգորիաներ են, որ նրանք անմիջական արդյունք են տիրող աննորմալ ու անագորույն սոցիալական կարդերի, ազգաբնակության անապահով, թշվառ տնտեսական վիճակի»[14]։ Այսպիսով, ալկոհոլիզմը, ոճրագործությունը և անբարոյականությունը հետևանք էին պրոլետարիատի տնտեսական վատթարագույն պայմանների, իսկ ոճրագործությունների մեծ մասն իր հերթին կատարվում էր ալկոհոլի ազդեցությամբ։

Բանվոր դասակարգի համար մեծ չարիք էր նաև աշխատանքի անվտանգության կանոնների բացակայությունը։ Կապիտալիստներն ընկնելով շահույթի հետևից հոգ չէին տանում աշխատանքի անվտանգության կանոնների պահպանման ուղղությամբ, որի հետևանքով լինում էին բազմաթիվ մարդկային զոհեր ու խեղանդամություն։ Անգամ պաշտոնական տվյալներով՝ դժբախտ դեպքերից մահացած բանվորների թիվը յուրաքանչյուր տարի Գերմանիայում կազմում էր մոտ 10000, Անգլիայում՝ մոտ 4000, Ֆրանսիայում՝ մոտ 3000, Ավստրո-Հունգարիայում՝ մոտ 1300, Ռուսաստանում՝ մոտ 1700 մարդ։ «Եվրոպական միմիայն հինգ երկրներում իրենց գործարաններում, ֆաբրիկաներում և հանքահորերում կապիտալիստները ամեն տարի սպանում են մոտ 20 հազար մարդ»[15],— գրում է Ստ. Շահումյանը։ Միայն Գերմանիայում 1886—1908 թթ. արձանագրվել է դժբախտ պատահարներից առաջացած մահվան 163490 դեպք, իսկ դժբախտ պատահարների հետևանքով ապրուստի միջոցներից զրկվել է 334375 մարդ։ Հաշմանդամ և կիսահաշմանդամ է դարձել մեկ միլիոնից ավելի բանվոր։ «Բոլորը միասին այդ 23 տարիների ընթացքում,— գրում է Ստ. Շահումյանը,— աշխատանքի ժամանակ տեղի ունեցած դժբախտ դեպքերից Գերմանիայում տուժել են ավելի քան ութ և կես միլիոն բանվորներ»[16]։

Ավստրիայում, նշում է Ստ. Շահումյանը, 1890—1909 թթ. աշխատանքի ժամանակ դժբախտ պատահարներից մահացել է 80 հազարից ավելի բանվոր։ Ավսարիական մի լրագրի վկայությամբ՝ «ոչ ֆրանսիական մեծ հեղափոխությունը, ոչ Կոմունան, ոչ Ռուսաստանյան հեղափոխությունը, չեն պահանջել բանվոր դասակարգից այնքան զոհեր, ինչքան պահանջել է նրանից միմիայն գերմանական բուրժուազիան իր «խաղաղ զարգացման» սոսկ վերջին 20 տարիների ընթացքում»[17]։

Աշխատանքի և կապիտալի միջև առաջացած հակադրության հետևանքով բանվոր դասակարգը սկսում է պայքարել հանուն իր շահերի պաշտպանության։

Ստ. Շահումյանը նկատում է, որ սկզբում բանվորական շարժումները կրում էին պրիմիտիվ բնույթ, քանի որ չկար այն ուժը, որը կարողանար կազմակերպել բանվոր դասակարգի պայքարը և նրան տար քաղաքական գիտակ-

---

14 Նույն տեղում։

15 Ստ. Շահումյան, Երկեր, հ. 2, Երևան, 1957, էջ 141։

16 Նույն տեղում։

17 Նույն տեղում։

ցականություն ու նպատակասլացություն։ «Այդ ուժը,— գրում է նա,— եղավ սոցիալիզմը։ Սկիզբն առած պրոլետարիատի արգանդում, լինելով «մարմին ի մարմնէ և ոսկր ոսկերաց» նորա, սոցիալիզմը իրանով ներկայացնում է բանվոր դասակարգի իդեալների մարմնացումն։ Նրա դրոշակի տակ կազմակերպվում են հզոր կուսակցություններ, որ և սոցիալ-դեմոկրատական անունն են կրում, որովհետև նոքա իրենց նպատակ ունեին աշխատավոր մասսայի — դեմոկրատիայի շահերի պաշտպանությունը»[18]։

Ստ. Շահումյանը գտնում է, որ պրոլետարիատի իրավազրկության ու կյանքի վատթար պայմանների հիմնական պատճառը արտադրության միջոցներից նրա սեփականազուրկ լինելն է և եզրակացնում է, որ բանվորներն ազատություն կստանան այն ժամանակ, երբ նրանց ձեռքը կանցնեն արտադրության միջոցները, որովհետև մասնավոր սեփականության շնորհիվ հասարակության մի մասը ճնշում է գործ դնում մյուսի վրա և այդտեղից են ծագում բոլոր անհավասարությունները. «ապա ուրեմն նա պետք է ոչնչացվի և ապագա սոցիալական կազմը պետք է հանգչի հողի և արտադրության գործիքների հասարակական սեփականության սկզբունքի վրա»[19]։

Այդ նպատակի իրականացմանը չի կարելի հասնել ո՛չ բանվոր դասակարգի տնտեսական ինքնագործունեությամբ, և ո՛չ մասնակի սոցիալական ու քաղաքական ռեֆորմներով. դրան կարելի է հասնել լոկ արմատական հեղաշրջման՝ սոցիալական հեղափոխության միջոցով, որի անհրաժեշտ պայմանը պետք է լինի պրոլետարիատի կողմից քաղաքական իշխանության նվաճումը[20]։

Ստ. Շահումյանը խոսելով Ռուսաստանի և արևմտաեվրոպական երկրների բանվոր դասակարգի պայքարի պայմանների մասին գտնում է, որ ինչպես Ռուսաստանում, այնպես էլ Արևմուտքում ծանր պայմանները բանվոր դասակարգին հնարավորություն չէին տալիս ստեղծելու իր դասակարգային կազմակերպությունները։ «Գերմանիայում մասսայական կազմակերպության սկիզբը դրվեց հենց հեղափոխության ժամանակաշրջանում՝ 1848 թվականին։ Կարճ ժամանակվա ընթացքում ստեղծվեցին 250 տարբեր ընկերություններ՝ «Բանվորական եղբայրություններ», որոնք արդեն 1849 թվականին ունեցան իրենց երկրորդ համագումարը։ Բայց հենց որ ռեակցիան հաղթանակեց, այդ ընկերությունները քայքայվեցին, և 50-ական թվականների կեսերին նրանցից ոչ մի հետք չէր մնացել»[21]։ Սակայն 1848 թ. գերմանական հեղափոխության պարտությունից երեք տասնամյակ հետո Գերմանիայում բանվորական շարժումը հասավ զգալի հաջողությունների, որի պատճառով էլ Բիսմարկը որոշեց օրենսդրական ճանապարհով վերջ տալ սոցիալ-դեմոկրատական և բանվորական շարժմանը։ 1878 թ. հոկտեմբերի 19-ին գերմանական Ռայխստագն ընդունեց սոցիալիստների դեմ ուղղված «բացառիկ օրենքը», որով բանվորական կազմակերպությունները ցրվեցին, արգելվեց բանվորական թերթերի և ամսագրերի հրատարակումը։ Գերմանիայի արդյունաբերական մի շարք կենտրոններում հայտարարվեց պաշարողական դրություն, կատարվեցին սոցիալ-դեմոկրատական կուսակցության անդամների ձերբակալություններ և այլն։ Գերմանական սոցիալ-դեմոկրատական կուսակցության ղեկավարությունը «բացառիկ օրեն-

18 Նույն տեղում, էջ 43—44։
19 Նույն տեղում, էջ 44։
20 Նույն տեղում, էջ 45։
21 Նույն տեղում, էջ 59։

քին» դիմավորեց անպատրաստ, սակայն կուսակցության շարքային անդամները սկսեցին ինքնուրույն կերպով կազմակերպել կուսակցության անլեգալ կազմակերպություններ։ Բիսմարկյան ռեակցիան «չկարողացավ կազմալուծել պրոլետարիատի շարքերը, ջախջախել նրա կազմակերպությունները։ Ընդհակառակը,— նշում է Ստ. Շահումյանը,— բանվորական կազմակերպությունները այդ ժամանակամիջոցում կոփվեցին և պայքարի դուրս եկան էլ ավելի ամրացած»[22]։

Սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը Ռայխստագի 1884 թ. ընտրություններում ստացավ 24 մանդատ։ Մեծ հաջողությունների հասավ նաև արհմիութենական շարժումը։ Եթե 1879 թ. արհմիություններում կար 50 հազար, ապա 1887 թ.՝ 250 հազար բանվոր։ «Գերմանական Ռայխստագի (պառլամենտի) ամեն մի նոր ընտրությունը,— գրում էր Ստ. Շահումյանը,— ապացուցում էր բանվորների գիտակցության արագ վերելքը, սոցիալ-դեմոկրատիայի ուժեղացումը և Բիսմարկյան արգելափակոցների անզորությունը»[23]։

«Բացառիկ օրենքի» տասնամյակի առթիվ գերմանական պրոլետարիատը սկսեց գործադուլային նոր հզոր շարժումներ։ Դրանցից նշանակալիցը 1887 թ. Ռուրի լեռնագործների 90 հազարանոց ցույցն էր, որը հանգեցրեց կառավարական զորքերի դեմ արյունահեղ մարտերի։ 1890 թ. Ռայխստագի հերթական ընտրությունների ժամանակ սոցիալ-դեմոկրատական կուսակցության պատգամավորների թիվն ավելացավ։ Այսպիսով, գերմանական «բանվոր դասակարգը և նրա կազմակերպությունները ցույց տվեցին զարմանալի կազմակերպական հարմարվողականություն ստեղծված ծանր պայմաններին, շդավանանելով իրենց հիմնական թեորիական և տակտիկական սկզբունքներին»[24]։

Գերմանական բանվորական շարժումը կրախի մատնեց բիսմարկյան դաժան ռեժիմը և լեգալ պայմաններ ստեղծեց սոցիալ-դեմոկրատական կուսակցության գործունեության համար։ Միայն 1890 թ. Գերմանիայում տեղի ունեցավ 266 գործադուլ, որոնց մասնակցում էր 38536 մարդ։ «Բանվորների քաղաքական և պրոֆեսիոնալ կազմակերպությունների դեմ ուղղված «բացառիկ օրենքները», որ այն ժամանակ մոլեգնում էին Գերմանիայում, գերմանական պրոլետարիատին սովորեցրին շրջանցել դրանք»[25]։ Զինված մարքսիստական դիալեկտիկական մեթոդով, Ստ. Շահումյանը հասարակական երևույթների զարգացման օրինաչափությունները գնահատում էր պատմական մատերիալիզմի դիրքերից։ Նա, օրինակ, իրավացիորեն շեշտում էր, որ բանվորական շարժումների զարգացումը կասեցնելու գործում ռեակցիայի գործադրած բոլոր ջանքերը ապարդյուն են. որքան էլ ուժեղ լինի ռեակցիան, գրել է Ստ. Շահումյանը, նա չի կարող կանգնեցնել կյանքը և ժամանակակից կյանքի գլխավոր ներվը՝ դասակարգային պայքարը, մի պայքար, որը երկաթյա անհրաժեշտությամբ պրոլետարիատին թելադրում է համախմբվել, կազմակերպվել[26]։

Բանվոր դասակարգի գործադուլային ու հեղափոխական շարժումները կազմալուծելու, պառակտելու և ջախջախելու նպատակով բուրժուազիան դի-

22 Նույն տեղում։
23 Նույն տեղում, էջ 60—61։
24 Նույն տեղում, էջ 61։
25 Նույն տեղում, էջ 60։
26 Նույն տեղում, էջ 62։

մում էր նաև տնտեսական տեռորին։ Ֆրանսիայում, օրինակ է բերում Ստ. Շահումյանը, ոստիկանական պրեֆեկտ Անդրիեի խոստովանությամբ, կառավարության հաշվին պահվում էին անարխիստական օրգաններ և կազմակերպվում տեռորիստական ակտեր։ Նույնն էր կատարվում Անգլիայում՝ ոստիկանության տեսուչ Մելվիլի ձեռքով, Բելգիայում՝ Պուրբեի կողմից։ Նույնն էր անում Ունդերն Շտերնբերգը Իտալիայում, Շրեդերը, Կաուֆմանը, Էրենբերգը, Ֆրիդեմանը և այլք Գերմանիայում, սրանք «դավաճանաբար մտնում էին Ս. Դ. կուսակցության շարքերը կուսակցությունը մահափորձերի ուղին մղելու հատուկ նպատակով, այդ նպատակի համար «մահափորձերի ֆոնդեր» էին հիմնում, իրենց ծառայություններն էին առաջարկում զինման, պայթուցիկ նյութեր պատրաստելու համար և այլն»[27]։

Այս և բազմաթիվ այլ փաստերի հիման վրա Ստ. Շահումյանը ցույց է տալիս, որ անհատական քաղաքական տեռորը շահավետ է իշխող դասակարգերի և ընդհակառակը, վնասակար ու կործանարար՝ պրոլետարիատի համար։ «Սոցիալ-դեմոկրատիայի կողմից ղեկավարվող ժամանակակից բանվորական շարժման ամբողջ ուժն այն բանի մեջ է, որ նա պատմական թատերաբեմ է հանում բանվորական մասսաներին իբրև պայքարող ուժ։ Ո՞չ այս աշխարհի որևէ հզորների բարերարությունները, ո՞չ բոլորի բարօրության համար իրենց զոհաբերող առանձին հերոսների մենամարտությունը, այլ հենց սոցիալ-դեմոկրատական գիտակցության լույսով սպառազինվող բանվորական մասսաների պայքարը, այն մասսաների, որոնք կազմակերպվում են որպես դասակարգ։ Իսկ տնտեսական տեռորն էլ հենց մասսայական պայքարը բացասող առանձին անձանց մենամարտն է»[28]։

Անդրադառնալով բանվորական շարժման մեջ տնտեսական տեռորի վնասակար հետևանքներին, Ստ. Շահումյանը գտնում է, որ այն բանվոր դասակարգին մղում է դեպի պայքարի հին ձևերն ու մեթոդները, խանգարում մասսայական լայն ագիտացիային ու պրոպագանդային և խոչընդոտում մասսայական պրոլետարական կազմակերպությունների ստեղծմանը։ Ստ. Շահումյանը նշում է, որ տնտեսական տեռորը կուսակցությանը և բանվոր դասակարգին վերադարձնում է դեպի պայքարի հին ձևերը, երբ անգիտակից բանվորները կարծում էին, թե տիրոջ չար կամքն է աղքատության ու կեղեքման պատճառը։ Տնտեսական տեռորը բանվորների հետամնաց խավերի ուշադրությունը մղում է բուրժուազիայի առանձին անձանց դեմ և սին հույս է սերմանում բանվորների մեջ, «թե սանձահարելով նրանցից առանձնապես վայրագներին, իրենք կարող են բարելավել իրենց ստրկական դրությունը»[29]։ Միաժամանակ Ստ. Շահումյանը մերկացնում է «չարին բռնությամբ չդիմադրելու» ռեակցիոն գաղափարախոսությունը, որը պրոլետարիատին շեղում էր մարտական պայքարից. «Մենք դատապարտում ենք անհատական տեռորը,— գրում է նա,— ոչ թե նրա համար, որ չենք ուզում «ահաբեկել», այսինքն՝ վախեցնել, սարսափեցնել բուրժուազիային։ Ընդհակառակը, մենք մերժում ենք անհատական տեռորը հատկապես իբրև միջոց, որը բավականաչափ չի վախեցնում բուրժուազիային, այլ միայն կազմալուծում է պրոլետարիատին։

---

27 Նույն տեղում, էջ 29։
28 Նույն տեղում, էջ 30։
29 Նույն տեղում։

Մենք անհատական տեռորը մերժում ենք՝ հանուն մասսայական հեղափոխական տեռորի»[30]։ Այս տեսակետից կարևոր է Ստ. Շահումյանի «Պարտիզանական կռիվը Լեհաստանում» հոդվածը, որտեղ նա նշում է, թե հեղափոխական հարձակողական գործողությունները հեղափոխական կազմակերպություններին փորձառություն տալուց բացի՝ բարձրացնում են ժողովրդի հեղափոխական, ռազմական տրամադրությունը[31]։

Հենվելով մարքս-լենինյան ուսմունքի վրա Ստ. Շահումյանը կապիտալիստական երկրների բանվոր դասակարգի առաջին և հիմնական խնդիրը համարում է քաղաքական ազատության նվաճումը, որի միջոցով միայն նա կարող է ընթանալ «դեպի աշխատանքի ապագա թագավորություն»։ Ոչ միայն բանվոր դասակարգը, այլև երկրի բոլոր ուժերն են ձգտում քաղաքական ու քաղաքացիական ազատության, բայց ինչպես միշտ, այս պայքարում ևս ամենաառաջավոր ու տոկուն մարտիկը բանվոր դասակարգն է[32]։

Ստ. Շահումյանը անզիջում պայքարել է միջազգային օպորտունիզմի դեմ։ Նա քննադատել է միջազգային ռևիզիոնիզմը և նրա պարագլուխ Բեռնշտայնին, որ ճգնում էր ապացուցել, թե, իբր, կապիտալիստական հասարակարգում բանվոր դասակարգի տնտեսական դրությունը գնալով լավանում է։ Ցնայած կապիտալիստական երկրների բանվոր դասակարգը պայքարի միջոցով բուրժուազիային ստիպել էր որոշ զիջումներ կատարել, սակայն դրանք էական փոփոխություն չէին կարող մտցնել նրա թշվառ վիճակի մեջ։ Այդ «փոքրիկ, անմիջական տնտեսական նվաճումները և թե ամբողջ նորագույն «սոցիալական օրենսդրությունը»,— գրում է Ստ. Շահումյանը,— անկարող են որևէ էական ու աչքի ընկնող փոփոխություն մտցնել պրոլետարիատի վիճակի մեջ։ Նրանք աննշան կաթիլներ են թշվառության այն օվկիանոսում, որ ներկայացնում է իրանից բանվոր դասակարգի դրությունը...»[33]։ Օպորտունիստները ձգտում էին բանվոր դասակարգին հեռու պահել քաղաքական պայքարից, նրան մղելով սոցիալական ռեֆորմների համար պայքարի ուղին։ Մերկացնելով նրանց, Ստ. Շահումյանը նշում էր, որ բանվոր դասակարգը և ամբողջ աշխատավոր ժողովուրդը կազատագրվեն միայն այն ժամանակ, երբ ամբողջ քաղաքական իշխանությունն անցնի պրոլետարիատի ձեռքը։

Ստ. Շահումյանը «Գերմանական սոցիալ-դեմոկրատների համագումարը» հոդվածում քննադատում է այդ կուսակցության մեջ բուն դրած օպորտունիստական տարրերին և նշում, որ նրանք պատկանում են գերմանական սոցիալ-դեմոկրատիայի աջ օպորտունիստական թևին, որը մերժելով մարքսիզմի հեղափոխական տեսությունը և հեղափոխական տակտիկան, դասակարգային պայքարի փոխարեն քարոզում է «դասակարգերի խաղաղ համագործակցություն», սոցիալական հեղափոխության և պրոլետարիատի դիկտատուրայի փոխարեն՝ «դրական աշխատանք» և աստիճանական սոցիալական ռեֆորմներ»[34]։

---

30 Նույն տեղում, էջ 33։

31 Ստ. Շահումյան, Երկեր, հ. 1, էջ 260։

32 Ս. Հ. Բարսեղյան, Ստ. Շահումյանի կյանքն ու գործունեության վավերագրական տարեգրություն, 1878—1918, Երևան, 1968, էջ 344։

33 Ստ. Շահումյան, Երկեր, հ. 1, էջ 88։

34 Ստ. Շահումյան, Երկեր, հ. 2, էջ 53։

Գերմանական սոցիալ-դեմոկրատական կուսակցության Հաննովերի, ինչպես նաև հետագա համագումարներում բեռնշտայնականությունը դատապարտվում է և նշվում, որ կուսակցությունը չպետք է դառնա սոցիալական ռեֆորմների կուսակցություն։

Իրավացի էր Ստ. Շահումյանը նկատելով, որ հարկ չկար կուսակցության համագումարներում, երբ դրվում էր Բեռնշտայնին և Դավիդին կուսակցությունից հեռացնելու հարցը՝ իբրև սոցիալ-դեմոկրատիայի հետ ոչ մի ընդհանուր բան չունեցող մարդկանց, զիջումներ անելու նրանց կեղծ աղաչանքներին և հավատալու կեղծ խոսքերին, թե իբր իրենք միայն թեորիայում են հայտնում իրենց տարակուսանքները, թե իրականում նրանք բոլոր հարցերում էլ ենթարկվում են կուսակցության մեծամասնությանը[35]։ Չնայած քննադատությանը՝ ո՛չ Բեռնշտայնը և ո՛չ էլ նրա կողմնակիցները չվտարվեցին կուսակցությունից։ Կուսակցության առաջնորդ Ա. Բեբելը փոխանակ հետևողականորեն մերկացնելու բեռնշտայնականությունը, սկզբում քարոզում էր հանդուրժողականություն՝ հանուն միասնության և գտնում, որ Բեռնշտայնը մենակ է և հող չունի բանվորական շարժման մեջ։ «Եվ այդ նույն Բեբելը,— գրում է Ստ. Շահումյանը,— երբ կուսակցության նախորդ համագումարներում հաշտեցնող բանաձևեր էր մտցնում, վստահություն էր հայտնում, որ կուսակցությանը կհաջողվի լուծել իր մեջ և չեզոքացնել օպորտունիստների չնչին փոքրամասնությունը, այժմ նրանց դեմ հանդես եկավ որոտընդոստ մի ճառով և կարգի հրավիրելու սպառնալի կոչով»[36]։

Ստ. Շահումյանը մերկացնում է օպորտունիզմի առաջնորդներից Դավիդին, որը գերմանական սոցիալ-դեմոկրատական կուսակցության Նյուրնբերգի համագումարում պնդում էր, թե համագումարում պետական բյուջեի քվեարկության հարցը ոչ մի առնչություն չունի սոցիալ-դեմոկրատիայի սկզբունքների հետ, որ այն պարզապես տակտիկայի հարց է։ Քննադատելով նրան Ստ. Շահումյանը ցույց էր տալիս, որ տակտիկայի և սկզբունքների նման հակադրումը ամենակոպիտ մի ծաղրանք է մարքսիզմի նկատմամբ և բացահայտորեն վկայում է այն մասին, որ «համագումարում օպորտունիստները և հեղափոխական էսդեկները խոսել են տարբեր լեզուներով»[37]։

Նյուրնբերգի համագումարում ծագած «կոնֆլիկտը» գերմանական պրոլետարիատի լայն խավերին հնարավորություն տվեց հիասթափվելու օպորտունիստներից։ Համագումարը մեծ նշանակություն ունեցավ նաև արևմտաեվրոպական մյուս երկրների «պրակտիկ քաղաքագետների», «խաղաղ», «դրական» տակտիկա սիրողների մերկացման համար, քանի որ Ս. Դ.-ի աջ, մանր բուրժուական օպորտունիստական թև գոյություն ուներ բոլոր այն երկրներում, որտեղ կար սոցիալ-դեմոկրատիա։ Ֆաբիականները և անկախականները՝ Անգլիայում, ժորեսիստները՝ Ֆրանսիայում, «ռեֆորմիստները»՝ Իտալիայում, մենշևիկները՝ Ռուսաստանում նրանք բոլորն էլ,— գրում էր Ստ. Շահումյանը,— նույն միս ու արյունից են, ինչ որ գերմանական բեռնշտայնական ռևիզիոնիստները»[38]։ Ընդհանրացնելով միջազգային օպորտունիզմի դեմ մղվելիք

35 Նույն տեղում, էջ 53—54։
36 Նույն տեղում, էջ 54։
37 Նույն տեղում, էջ 55։
38 Նույն տեղում, էջ 57։

պայքարի անհրաժեշտության մասին իր մտքերը, Ստ. Շահումյանը գտնում էր, որ «վճռական և անխնա պայքարը միջազգային օպորտունիզմի դեմ և նրա հաղթահարումը՝ բանվորական կուսակցության միջազգային մարքսիստական մասի կարևորագույն խնդիրներից մեկն է»[39]։

Իմպերիալիզմի դարաշրջանում բանվորական շարժումների մեջ սրվում է հեղափոխական և ռեֆորմիստական տենդենցների պայքարը։ Բանվորական շարժումներն ընդունում էին ավելի մասսայական և քաղաքական բնույթ։ 1905 թ. Իենում կայացած գերմանական սոցիալ-դեմոկրատական կուսակցության համագումարում որոշում ընդունվեց ռուսական բանվոր դասակարգի օրինակով շարունակել պայքարը, սակայն այնպես, որ այն չվերածվի զինված ապստամբության։ Նույնիսկ Ա. Բեբելը տեղի էր տալիս օպորտունիզմին, գրելով, որ պայքարի գլխավոր ձևը պառլամենտական պայքարն է։

Այդպիսի պայմաններում օպորտունիզմի դեմ պայքարում էին գերմանական սոցիալ-դեմոկրատական կուսակցության ձախ թևի ներկայացուցիչները, որոնց մասին Ստ. Շահումյանը գրել է. «Մեր ամբողջ համակրանքը եղել է սկզբից այն փոքրաթիվ խիզախների հետ, որոնք Լիբկնեխտի դրոշի տակ բողոքել են Վիլհելմի արյունոտ արկածախնդրության դեմ և ժխտել են սոցիալ-դեմոկրատական պառլամենտական ֆրակցիայի մեծամասնության ազգայնական քաղաքականությունը»[40]։

Չնայած դրան՝ Գերմանական ձախերը թույլ էին տալիս լուրջ սխալներ։ Այսպես, օրինակ, Ռ. Լյուքսեմբուրգը քաղաքական գործադուլները համարում էր պրոլետարիատի մասսայական ելույթների բարձրագույն ձևը և ժխտում էր հեղափոխության մեջ կուսակցության ղեկավար և կազմակերպիչ դերը։

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը նոր թափ հաղորդեց կապիտալիստական երկրների բանվոր դասակարգի հեղափոխական շարժումներին։ Հեղափոխական հուժկու շարժումներ ծավալեց գերմանական և ավստրիական պրոլետարիատը։ Այդ մասին Ստ. Շահումյանը գրում է. «Ավստրիայի և Գերմանիայի պրոլետարիատը ապստամբության դրոշը բարձրացրեց իր երկրում։ Հոկտեմբերյան փառապանծ հեղափոխությունը պետք է արթնացներ մեռյալներին։ Պետերբուրգի բանվորների ու զինվորների հերոսությունը... պետք է բոլոր երկրների պրոլետարների սիրտը բորբոքեր սրբազան խանդավառության հրով և նրանց շարժեր իրենց իմպերիալիստական կառավարությունների դեմ»[41]։

Ստ. Շահումյանը համոզված էր, որ գերմանական և ավստրիական պրոլետարիատը ռուսական բանվոր դասակարգին կպաշտպանի համաշխարհային իմպերիալիզմի դեմ նրա մղած պայքարում, քանի որ «մենք չէինք միանում ռուսական, անգլիական ու ֆրանսիական իմպերիալիստների հետ, մենք ստախոսներ, խաբեբաներ չէինք համարում ռուս զինվորների հետ եղբայրացող գերմանական ու ավստրիական միլիոնավոր զինվորներին և չէինք հրամայում գնդակահարել նրանց. մենք կոչ չէինք անում Կերենսկու օրինակով հարձակվելու Գերմանիայի դեմ և դաշնակից իմպերիալիստների թելադրանքով չէինք կազմում պատերազմը մինչև 1918 թվականի վերջը շարունակելու պլան»[42]։

39 Նույն տեղում։

40 Նույն տեղում, էջ 370։

41 Ստ. Շահումյան, Երկեր, հ. 3, Երևան, 1958, էջ 89։

42 Նույն տեղում, էջ 90։

Այսպիսով, Ստ. Շահումյանն իր աշխատություններում բազմիցս անդրադարձել է արևմտաեվրոպական երկրների բանվոր դասակարգի դրության և բանվորական շարժումների հարցերին, տվել դրանց խոր վերլուծությունը, որն այսօր էլ չի կորցրել իր նշանակությունը հատկապես միջազգային օպորտունիզմի դեմ մղվող պայքարում։ Ինչպես արդեն տեսանք, Ստ. Շահումյանը մեծ տեղ է հատկացրել հատկապես գերմանական բանվոր դասակարգի դրության ու պայքարի հարցերին։ Դա հետևանք է այն բանի, որ արևմտաեվրոպական պրոլետարիատի դասակարգային պայքարի ավանգարդում էր գերմանական բանվոր դասակարգը, որի պայքարը մեծ ազդեցություն է թողել մյուս երկրների բանվորական շարժումների վրա։

Ст. ШАУМЯН О ПОЛОЖЕНИИ РАБОЧЕГО КЛАССА И РАБОЧЕМ ДВИЖЕНИИ В ЗАПАДНОЕВРОПЕЙСКИХ СТРАНАХ

В. В. МИКИЧЯН

Резюме

В своих трудах Степан Шаумян наряду с многими другими вопросами затрагивал также проблемы, касающиеся тяжелого положения рабочего класса и роста рабочего и социалистического движения в странах Западной Европы, рассматривая их с позиций марксизма.

Большой научный интерес представляют также высказывания Ст. Шаумяна о борьбе двух тенденций — оппортунистической и революционной — в западноевропейском рабочем и профсоюзном движении, о росте революционной тенденции.